ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 ապրիլի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

58
(2908)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳՆԱՑԵԼ Է ՀԱՆՐԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ «ՍՏՈՒԳԵԼՈՒ»

Վարչապետի տիկին Աննա Հակոբյանը Գյումրիում ՔՊ-ի առջեւ ծառացած հարցերն ու խոչընդոտները լուծելու գործն իր վրա է վերցրել:

Երեկ հայտնի դարձավ, որ վարչապետի տիկինը գնացքով գնացել է Գյումրի:

ArmLur.am-ը տեղեկացրել էր, որ Աննա Հակոբյանը Գյումրիում՝ 44-օրյա պատերազմում նահատակված հերոսի հիշատակին նվիրված խաչքարի բացմանը մասնակցելու էր գնացել:

«Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել Հակոբյանի՝ Գյումրի այցից:

Այսպիսով՝ տեղեկացանք, որ վարչապետի տիկնոջ այցն իրականում քողարկված քաղաքական նպատակ է ունեցել:

Բանն այն է, որ որքան էլ ՔՊ-ականները ցույց են տալիս, թե իրենք Գյումրիում իշխանությունն «իրենցով անելու» մտադրություն չունեն, ղեկավարությունն այնտեղ հեշտ ու հանգիստ զիջել են «Բալասանյան դաշինքին», իրականում, ՔՊ-ականներն անհանգիստ են:

Բանն այն է, որ Գյումրիում հասարակության դժգոհությունները Փաշինյանի իշխանությունից գնալով խորանում են. հատկապես վերջին օրերին այնտեղ պարբերաբար ակցիաներ են տեղի ունենում, բնակիչները ճանապարհ են փակում, վերջերս էլ գյումրեցիները Նիկոլ Փաշինյանին էին շատ «ջերմ» ընդունել Գյումրիում:

ՔՊ-ականներն էլ լուրջ մտավախություն ունեն, որ Գյումրիում կրքերը կարող են օրըստօրե թեժանալ, իրավիճակը կարող է ցանկացած պահի իրենց վերահսկողությունից դուրս գալ. Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Աջապահյանին էլ լուրջ «վտանգ» են համարում արդեն իրենց համար:

Ու, քանի որ, այնտեղ իշխանությունն իրենց ձեռքին չէ, եւ անհրաժեշտության դեպքում իրենց մեթոդներով չեն կարողանա զսպել լարված մթնոլորտը, ահա Աննա Հակոբյանը այս կարեւոր «առաքելությունն» իր վրա է վերցրել:

Մեր տեղեկություններով՝ երեկվա նրա այցը Գյումրի նպատակ է ունեցել նախ «ստուգել» հանրային տրամադրությունները, բացի դրանից՝ իր ազգականի՝ Գյումրու նախկին փոխքաղաքապետ Վահագն Մկրտչյանի միջոցով նաեւ ՔՊ-ի համար որոշ հարցեր լուծել:

Հաջողվե՞լ է դա, թե՞ ոչ՝ ժամանակը ցույց կտա:



Հանրապետության նախագահի աշխատակազմը նախագահին սպասարկող մեքենաների համար ձեռք է բերել 216 հազար դրամի LED լույսեր՝ 36 հատ: 36-ից երեսունն արժեցել է 144 հազար դրամ, իսկ 6-ը՝ 72 հազար դրամ: LED լույսերի տեխնիկական բնութագիրը հետեւյալն է. «LED լուսարձակ, հզորությունը՝ 30W, լուսային հոսանքը՝ 2700 լյումեն, սնուցման լարումը՝ 100-240V»: Լուսարձակների ձեռքբերման պայմաններից մեկը գնորդին հանձնելու ժամանակահատվածն է: Եվ, ըստ դրա, լուսարձակների կեսը պետք է մատակարարել պայմանագրի ուժի մեջ մտնելուց 40-րդ օրը, իսկ մյուս կեսը՝ սույն թվականի սեպտեմբերի 1-ին: Նախագահի աշխատակազմը հաճախ է գնումների պայմանագրեր կնքում մեքենայի տեխնիկական սպասարկումների հետ կապված: Այս անգամ մեքենաների տեխնիկական սպասարկումը ՀՀ նախագահի համար արժեցել է 5 մլն 400 հազար դրամ: Այս սպասարկումը արվել է 7 մեքենայի համար: Սեփական մեքենաների վրա միլիոններ ծախսող նախագահը նշված մակնիշի մեքենաներով, չգիտես, թե ուր է այցելում, սակայն դրանց վերանորոգման համար աճուրդները, ինչպես տեսնում ենք, «խոստումնալից են»: Հավելենք, որ տեխնիկական առումով, ՀՀ բյուջեով սպասարկվող մեքենաներով նախագահը մեկ անգամ չայցելեց փողոցում ապօրինի բերման ենթարկվածներին, իր ոչ մի խոսքում չհիշատակեց նրանց մասին: Սա էլ՝ ՀՀ-ում ՔՊ-ականների «սրտի» նախագահը:



Օրեր առաջ պարզ դարձավ, որ Հայաստանի ամենահայտնի քաղաքացի, Իտալական «Ինտեր»-ի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը դարձավ Իտալիայի չեմպիոն. սա իսկապես պատմական իրադարձություն է նաեւ հայերիս համար: Մեր ֆուտբոլիստի լուսանկարը բազմաթիվ միջազգային լրատվամիջոցների առաջին էջերին էր, մեծ ուրախություն էր նաեւ սոցցանցերի հայկական տիրույթում: Տարօրինակն այն է, որ այս մեծ իրադարձությունից անմասն մնաց Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան, որը, մինչեւ երեկ, նույնիսկ իր ֆեյսբուքյան պաշտոնական էջում կամ կայքում մեկ խոսք անգամ չգրեց այս իրադարության մասին: Սա իսկապես, մեղմ ասած, տարօրինակ է. նորմալ երկրում Հենրիխ Մխիթարյանին կշնորհավորեին ու նրանով կհպարտանային՝ սկսած իշխանության բարձրագույն օղակներից: Ամեն պատեհ ու անպատեհ առիթով «ստատուս» գրող իշխանավորների շրջանում եւս չնկատվեց որեւէ շնորհավորական խոսք կամ գրառում: Պատկերացրեք՝ հիմա ինչ կանեին ադրբեջանցիները, եթե Հենրիխ Մխիթարյանի գոնե կես մակարդակի ու ճանաչելիության չափ ֆուտբոլիստ ունենային. վստահաբար՝ Բաքվի գլխավոր փողոցներում կլինեին նրա լուսանկարները, Ալիեւն անձամբ կդիմավորեր նրան ու կշնորհեր «Ազգային հերոսի» շքանշան: Ի դեպ, մեր հարեւան Վրաստանում հաճախ կարելի է տեսնել իտալական «Նապոլի»-ի հարձակվող Խվիչա Կվարացխելիայի դիմանկարները. պետությունը նրան օրինակ է բերում նոր սերնդի համար ու ամենուր քարոզում է իր մարզիկների հաջողությունները, նրանց դարձնում է երկրի այցեքարտ: Իսկ մեր պարագայում գործ ունենք հերթական նեղ անձնական ամբիցիաների հետ: Ի դեպ, թեման ուսումնասիրելիս մեզ հայտնի դարձավ, որ ՀՖՖ ղեկավարությունը չի շնորհավորել նույնիսկ լեգենդար «Արարատ 73»-ի հաղթանակի 50 ամյակի կապակցությամբ: Այս մասին տեսանյութերից մեկում նշում է լեգենդար թիմի մարզիչ Նիկիտա Սիմոնյանը: Ավելին՝ ՀՖՖ մեր աղբյուրները պնդում են, որ շռայլ ծախսերով աչքի ընկնող ֆուտբոլային չինովնիկները նույնիսկ չեն օգնել ծանր հիվանդությամբ տառապող, երջանկահիշատակ Նիկոլայ Ղազարյանին, ով ոչ միայն «Արարատ 73»-ի լեգենդներից էր, այլեւ ՀՖՖ առաջին նախագահը: Այս մասով պարզաբանում ստանալ, ինչպես միշտ, չհաջողվեց, քանզի ՀՖՖ-ի ներկայիս ղեկավար ու նախկին լրագրող Արմեն Մելիքբեկյանը խուսափում է լրագրողների հարցերին պատասխանելուց: Ի դեպ, միայն ԿԳՄՍ փոխնախարար Կարեն Գիլոյանն էր իր ֆեյսբուքյան էջով շնորհավորել Մխիթարյանին:

Ծնվեց, քայլեց, պաշտոնյա դարձավ. եթե Հուլիոս Կեսարի՝ «Եկա, տեսա, հաղթեցի» հանրահայտ ասույթի ոճը տեղադրենք մեր օրերի ՔՊ պաշտոնյաների գերակշիռ մասի կենսագրություններում (տե՛ս լուսանկարը ArmLur.am կայքում), կստացվի, որ անձինք, չունենալով աշխատանքային որեւէ կենսագրություն, անցյալ, ստեղծած արժեքներ, իրենց այսօրվա բարեկեցության եւ զբաղեցրած պաշտոնների համար պարտական են բացառապես Նիկոլ Փաշինյանի իրականացրած իշխանափոխությանը: Օրինակներից մեկը Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի նորանշանակ տեղակալն է, որը մինչեւ «բաղձալի հեղափոխությունը» ոչ մի որոպե չի աշխատել որեւէ վայրում, թեեւ ավարտել է դպրոց եւ 8 տարի ուսանել է Գավառի պետական համալսարանում: Ահա՛, Նիկոլ Փաշինյանի կադրերի ընտրության պատկերն է:

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ

«ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ ԱԼԻԵՎԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ»

Մի քանի օր է, ինչ Տավուշում մարդիկ ոտքի են կանգնել՝ թույլ չտալու ապրիլի 19-ին ձեռքբերված համաձայնության իրականացումը. համաձայնություն, ըստ որի՝ Տավուշի մարզի մի շարք գյուղեր հանձնվում են Ադրբեջանին:

Այսօր անհնազանդության ակցիաներ են իրականացվում արդեն Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում. փակ են մի շարք մայրուղիներ եւ մայրաքաղաք Երեւանում:

Այս խնդիրների մասին «Ժողովուրդ» օրաթերթը, ակցիայի ընթացքում, զրուցել է «Միասին» շարժման համակարգող խորհրդի անդամ Նարինե Դիլբարյանի հետ:

-Տիկին Դիլբարյան, անհնազանդության ակցիաները մի քանի օր է ակտիվացել են ՀՀ ողջ տարածքով: Ի՞նչ եք կարծում, այս ակցիաները արդյունք կտա՞ն: Տեսնում ենք, որ իշխանությունը տարածքներ է հանձնում, տավուշցիները ոտքի են ելել Տավուշում, Դուք այստեղ եք աջակցում...:

-Ես համոզված եմ, որ Հայաստանում ժողովրդից խլվել է իշխանությունը, եւ այս քաղաքացիական անհնազանդության բաձարձակ խաղաղ, օրինական միջոցները անպայման տալու են իրենց արդյունքը: Ներկայիս իշխող վարչախումբը, որը նույնպես իրագործել է խաղաղ պայքարի միջոցները, եկավ իշխանության, եւ ոչ միայն ձախողեց Հայաստանի Հանրապետության օրենսդրական եւ սահմանադրական կարգը եւ այն ենթարկեց մեկ անձի «կառավարման վախերի», այլեւ Հայաստանը դարձրեց բացարձակ կապիտուլյացված պետություն, որտեղ չի գործում ոչ մի օրենք, եւ որտեղ առաջնորդվում են միայն կեղծ թեզերով:

Նայեք սահմանազատմանն ու սահմանագծմանը. ոչ ոք դեմ չէ, սակայն դա պետք է տեղի ունենա ՀՀ Սահմանադրության հիման եւ ԵԱՀԿ գործող ուղեցույցի հիման վրա: Այս դեպքում կա առերեւույթ հիմնավոր կասկած, որ, ի հակակշիռ օրենքի, կատարվում է այն, ինչ պահանջում է Ալիեւը: ՀՀ քաղաքացիների առաջնային խնդիրը իրենցից խլված իշխանությունը վերադարձնելն է: Այս ակցիան նպատակ ունի ցույց տալու, որ ժողովուրդը հրաշալի գիտի օրենքները. այդ խաբեությունները ինչպես Տավուշում չեն գործել, այնպես էլ այստեղ չեն գործելու: Այս հարցը պետք է լուծվի Երեւանում, եւ բոլոր այն քաղաքացիները, որոնց համար թանկ է պետություն ունենալու եւ անվտանգ քաղաքացի լինելու իրավունքը պետք է համախմբվեն:

Տիկին Դիլբարյանը նշել է, որ մոտ 300 ցուցարարներից կեսին բերման են ենթարկել, եւ եթե քաղաքացիներին փորձեն ճնշել, ապա բոլորը պետք է համախմբվեն պաշտպանելու ՀՀ քաղաքացուն եւ հայրենիքը, քանզի Տավուշը նաեւ Երեւանում է: Նա նշել է, որ Հայաստանը բռնապետություն չէ, եւ ոչ ոքի չի հաջողվելու այն բռնապետության վերածել:

- Տիկին Դիլբարյան, կարո՞ղ ենք արձանագրել, որ այս քայլերով իշխանությունը ոտնահարել է ժողովրդավարություն տերմինը:

-Գիտեք, երբ Նիկոլ Փաշինյանն ասում էր՝ Արցախի հարցում իջեցնենք նշաձողը, նա նկատի ուներ՝ եկեք իջեցնենք բոլոր տեսակի նշաձողերը: Ժողովրդավարական հռչակված երկրում քաշքշում են մարդկանց, բռնի ուժով բերման ենթարկում, հարվածում: Մենք ոչ ոքի նկատմամբ վիրավորանք կամ ատելության խոսք չենք հնչեցրել, այնինչ ոստիկանության կողմից իրականացվում են բռնի գործողություններ, որոնք, բնականաբար, թելադրված են սեփական քաղաքացիների հանդեպ ատելությամբ: Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին, եւ ժողովրդի ընտրյալները խախտել են իրենց ծրագիրը: Բաց արե՛ք «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ծրագիրը, այնտեղ ոչ մի տեղ գրված չէ, որ մեկ անձի վախերի կամ անկարողունակության պատճառով ամբողջ հանրապետության տարածքները ամեն օր պետք է կտրատվեն, փոփոխվեն, եւ մենք ամեն ինչ պետք է զիջենք Ադրբեջանին: Մենք շատ լավ գիտենք, թե ինչ եղավ, երբ Ադրբեջան ճանաչեցինք Արցախը. այն լիովին վերացավ, եւ հիմա փորձում են կատարել նույնը Տավուշի գյուղերում, ապա Գեղարքունիքում...եթե ամեն բան ճանաչվի Ադրբեջան, այստեղ լինելու է այլ պետություն, իսկ մենք, փաստորեն, մեր համաձայնությամբ հանձնելու ենք մեր պետությունը:

Տիկին Դիլբարյանը, անդրադառնալով ոստիկանների գործողություններին, նշել է, որ կանանց բաշխելուց հետո՝ տուն գնալիս, նրանք պետք է որ չկարողանան իրենց գլուխը բարձին դնել:

Անդրադառնալով Հայոց Ցեղասպանության զոհերին ցուցակագրելու իշխանության հայտարարությանը՝ Նարինե Դիլբարյանն ասաց. «Անդրանիկ Քոչարյան անունը կրող այդ անձի խոսքը, որին հետեւեց հանրապետության վարչապետ գործող անձի այն ուղերձը, ոտեղ միայն երեք անգամ հնչեց «Ցեղասպանություն» բառը եւ չասվեց, որ դրանք բուրժական գործողություններ են, վտանգավոր են, եւ հասկանալի է, որ դա մի մեծ ծրագիր է՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության»:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊՈՐԴՈՒՄ՝ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԴԵՄ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 418-րդ եւ 421-րդ հոդվածներով հանցագործության մասին հաղորդում ներկայացվեց Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն՝ Նիկոլ Փաշինյանին քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջով՝ Տավուշում ՀՀ ինքնիշխան տարածքները եւ բնակավայրերը Ադրբեջանին հանձնելու գործընթաց սկսելու կապակցությամբ:

Հաղորդումը կազմել են փաստաբան Արա Զոհրաբյանը եւ պահեստազորի գնդապետ Հայկ Նահապետյանը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածի համաձայն.

1. Պետական դավաճանությունը՝ թշնամու կողմն անցնելը, լրտեսությունը, օտարերկրյա պետությանը, օտարերկրյա կամ միջազգային կազմակերպությանը կամ դրա ներկայացուցչին պետական գաղտնիք պարունակող տեղեկություն հանձնելը կամ այդ տեղեկությանը նշված անձանց ծանոթանալու համար պայման ստեղծելը կամ թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալը, որը կատարել է Հայաստանի Հանրապետության քաղաքացին՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային անձեռնմխելիության կամ արտաքին անվտանգության՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասնհինգից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 421-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

1. Տարածքային ամբողջականությունը խախտելուն՝ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով Հայաստանի Հանրապետության տարածքի մասն առանձնացնելուն կամ Հայաստանի Հանրապետության տարածքը կամ դրա մասն այլ պետությանը հանձնելուն ուղղված գործողություններ կատարելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

Հաղորդմամբ պահանջվում է՝ «Հանձնարարել նախաձեռնել քրեական վարույթ, ձեռնամուխ լինել նախաքննության իրականացմանը եւ լուծել Նիկոլ Փաշինյանին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը»:

ԿԱԹՎԱԾԱՀԱՐ Է ԱՆԵԼՈՒ ՀՀ-Ն

ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը սոցցանցի իր էջում գրում է. «Հայաստանի իշխանությունն առաջին փուլով խոստացած տարածքային զիջումները չավարտած՝ Ադրբեջանն արդեն հիշեցնում է մյուս ակնկալիքների մասին՝ միջանցք, սահմանադրական փոփոխություններ եւ չսպառազինվելու որոշում:

Թեեւ այս պահին գործընթացը Բաղանիս, Ոսկեպար, Կիրանց գյուղերի տարածքում կամ մատույցներում է, եւ ՀՀ եւ Ադրբեջանի իշխանություններն ավելի վաղ նշել էին, որ հաջորդ փուլով պետք է Ադրբեջանին հանձնվեն, այսպես կոչված, 4 անկլավները:

Այս 4 անկլավներից 3-ը՝ Տավուշի մարզում են, իսկ 1-ը՝ Արարատի մարզում: Սրանց հանձնումն ամբողջությամբ կաթվածահար է անելու Հայաստանի Հանրապետությունը, իսկ իշխանության առաջարկած այլընտրանքները զուտ սողալու հնարավորություն են:

Պետք է հերթով, անուն-ազգանունով, պաշտոնով ֆիքսել, թե ով է սրա դեմ պայքարում, ով է լռում եւ ով է նպաստում Հայաստանի կազմալուծման գործընթացին»:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱԳՆ-Ն ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

Հնդկաստանը լավ հարաբերություններ ունի Բաքվի եւ Երեւանի հետ, սակայն Նյու Դելին նաեւ մտահոգված է պաշտպանական արտադրանքի արտահանման խթանմամբ:

Այս մասին հայտարարել է Հնդկաստանի ԱԳՆ խոսնակ Ռանդհիր Ջեյսվալը՝ արձագանքելով Հնդկաստանի կողմից Հայաստանին զենք մատակարարելու վերաբերյալ Ադրբեջանի քննադատությանը:

«Մենք շատ լավ հարաբերություններ ունենք եւ՛ Ադրբեջանի, եւ՛ Հայաստանի հետ, բայց, բացի դրանից, մենք նաեւ իրականացնում ենք պաշտպանական արտահանման խթանման Հնդկաստանի քաղաքականությունը»,- ասել է նա:

Ավելի վաղ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել էր, որ իրենք չեն կարող ձեռքերը ծալած նստել, քանի դեռ Ֆրանսիան, Հնդկաստանը եւ Հունաստանը զինում են Հայաստանին: Ըստ Ալիեւի՝ թվարկված երկրները դա անում են բացահայտ եւ ցուցադրաբար եւ նույնիսկ փորձում են դրանով ինչ-որ բան ապացուցել Բաքվին:

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

ՀՀ ԱԺնախագահ Ալեն Սիմոնյանն ապրիլի 25-ին ընդունել է Ֆրանսիայի Հանրապետության Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Ժիլբեր-Լյուկ Դըվինազի գլխավորած պատվիրակությանը:

Ալեն Սիմոյանը շնորհակալություն է հայտնել հունվարի 17-ին Ֆրանսիայի Սենատի կողմից Արցախում հայերի նկատմամբ ադրբեջանական վարքագծի եւ ՀՀ սուվերեն տարածք ներխուժելու վերաբերյալ բազմակուսակցական բանաձեւի՝ բացարձակ մեծամասնությամբ ընդունման համար:

Ժիլբեր-Լյուկ Դըվինազը նշել է, որ Ֆրանսիան պատրաստ է ընդլայնել Հայաստանի Հանրապետությանն աջակցող փոխգործակցության շրջանակը խորհրդարանական մակարդակում:

ԹԱՎՐԻԶՈՒՄ ՀՀ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ ԿԲԱՑՎԻ

Հայաստանի կառավարությունը Իրանի Թավրիզ քաղաքում գլխավոր հյուպատոսություն բացելու որոշում է կայացրել: Ինչպես հաղորդվում է, Թավրիզում գլխավոր հյուպատոսություն բացելու հարցն ընդգրկված էր Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի օրակարգում՝ չզեկուցվող հարցերի փաթեթում:

Հիմնավորման մեջ նշվում է, որ 2022 թվականին Հայաստանի Հանրապետության վարչապետը եւ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահը պայմանավորվածություն են ձեռք բերել Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության առեւտրաշրջանառության ծավալները հասցնել մեկ, այնուհետեւ՝ երեք միլիարդ ԱՄՆ դոլարի: Թավրիզում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսության գործունեությունը կարող է նպաստել Հայաստան-Իրան տնտեսական հարաբերությունների զարգացմանը:

«Հիմք ընդունելով 2007 թվականի հոկտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության ԱԳ նախարարների կողմից ստորագրված «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջեւ գլխավոր հյուպատոսություններ հիմնելու մասին» փոխըմբռնման հուշագիրը՝ 2022 թվականի հոկտեմբերից Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքում գործում է Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսությունը, իսկ Իրանի Իսլամական Հանրապետության Արեւելյան Ատրպատական նահանգի Թավրիզ քաղաքում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսության հիմնումը կապահովի փոխադարձության սկզբունքի կիրարկությունը»,- նշված է հիմնավորման մեջ:

ԳԱԶԻ ՆԵՐԿՐՈՒՄ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ՞Ց

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը դրական է վերաբերվում Ադրբեջանից Հայաստան գազ ներկրելու Իլհամ Ալիեւի առաջարկին:

«Կարծում եմ՝ մենք պետք է քննարկենք այդ հարցը: Այնպես չէ, որ մեր օգտագործած գազի մի մասը ադրբեջանական գազ չէ, որովհետեւ, վստահ եմ, այն պայմանագրով, որ Ռուսաստանից գալիս, մտնում է իրենց մոտ եւ գնում Եվրոպա, նույն գազն է, մեծ հաշվով, գալիս եւ մտնում մեր տարածք:

Շատ լավ տարբերակ է, որ ոչ միայն Ադրբեջանից, այլեւ Պարսկաստանից գազամուղ անցկացնել, գազ գնել»,- ապրիլի 25-ին խորհրդարանում լրագրողների հետ զրույցում ասել է Սիմոնյանը:

Օրերս Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել է, որ Հայաստանը կարող է Ադրբեջանից գազ գնել՝ երկու երկրների հարաբերությունների կարգավորումից եւ խաղաղության պայմանագրի ստորագրումից հետո:

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄ

ՏԱՎՈՒՇԻՑ ՍԿՍԵԼԸ ԲԱՔՎԻ ԱՌԱՋԱՐԿՆ Է ԵՂԵԼ

«Սահմանազատումը եւ խաղաղության պայմանագիրը երկու առանձին հարցեր են, կարծում եմ՝ սխալ կլինի դրանք միավորել մեկի մեջ, ու մեկը մյուսից կախման մեջ դնել».- այս մասին ասել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը՝ ընդգծելով, որ սահմանազատումը չափազանց բարդ եւ երկարատեւ գործընթաց է:

«Խորհրդային տարիներին, երբ ունեինք վարչական սահմաններ, Հայկական ԽՍՀ-ի եւ Ադրբեջանական ԽՍՀ-ի միջեւ այս վարչական սահմանի մի մասը սահմանված չէր: Սահմանի մեծ մասն ամբողջովին անմարդաբնակ է՝ 3500 մետր բարձրությամբ լեռներ կան, որոնք տարվա ինն ամիսը ծածկված են ձյունով: Սա, իսկապես, շատ բարդ տեղանք է: Ուստի, գործնական տեսանկյունից այս սահմանի սահմանազատումը կարճ ժամանակում անհնար է: Այսպիսով՝ այն շատ դանդաղ գործընթաց է լինելու: Գործընթաց, որը պահանջում է բարձր ճշգրտություն: Հետեւաբար, եթե սպասենք մինչեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանը սահմանազատվի, եւ հետո խաղաղության պայմանագիր կնքվի, մեզ անհարժեշտ կլինի 30 տարի, նույնիսկ՝ ավելին: Ուստի, առաջարկում ենք առանձնացնել այս երկու հարցը». - ասել է Ալիեւը:

Նա հավելել է, որ Տավուշի մարզից սահմանազատումը սկսելը եղել է Բաքվի առաջարկը:

«Մենք հայկական կողմին ասացինք, որ եթե իսկապես ցանկանում են առաջ գնալու իրենց պատրաստակամությունը դրսեւորել, պետք է այդպես անեն... Կարծում եմ, որ մեր պետական սահմանի մոտ 10-12 կիլոմետրն արդեն կարելի է սահմանազատված համարել: Սա կարեւոր կետ է, եւ պատահական չէ, որ շատ տարածաշրջանային եւ ոչ տարածաշրջանային երկրներ արդեն իսկ իրենց աջակցությունն են հայտնել դրան: Կտեսնենք, թե ինչպես կշարունակվի այս գործընթացը: Ինչպես արդեն ասացի, երկու կողմն էլ դրսեւորել է կառուցողականություն: Երկու կողմն էլ հասկանում է այս հարցի զգայունությունը եւ միեւնույն ժամանակ հավատարմությունը միջազգային իրավունքին: Կարծում եմ՝ եթե հետագա փուլերում նույն մոտեցումը կիրառվի, մենք կկարողանանք ավելի արագ առաջ շարժվել». - ասել է Ալիեւը:

Նա հավելել է, որ սահմանը պետք է սահմանազատել սկզբունքներից ելնելով, բայց, միեւնույն ժամանակ, կան սահմանի որոշ հատվածներ, որոնք խնդիրներ են ստեղծում երկու կողմի համար. դա վերաբերում է ճանապարհներին, անվտանգության խնդիրներին, միմյանց տարածքի խորության տեսանելիությանը:

«Ուստի, մենք պետք է ստեղծագործ մոտեցում ցուցաբերենք: Մենք չպետք է հավատարիմ մնանք մեկ կոնկրետ գծին եւ կուրորեն հետեւենք դրան: Մենք պետք է ողջամիտ լինենք եւ պայմանավորվենք այնպիսի սահմանի շուրջ, որը կլինի անվտանգ եւ հարմար երկու կողմերի համար: Չնայած, ինչպես արդեն ասացի, սահմանամերձ եւ հարակից տարածքների մեծ մասը բնակեցված չէ, բայց կան տարածքներ, որտեղ մարդիկ ապրում են իրար կողքի: Եվ այդ տարածքներից մեկը հենց այդ չորս գյուղերի տարածքն է, որտեղ բնակավայրերի միջեւ հեռավորությունը կարող է հասնել մի քանի հարյուր մետրի, կամ նույնիսկ ավելի քիչ», - եզրափակել է Ալիեւը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՌԴ–Ն ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

ՌԴ ԱԳՆ-ն մեկնաբանել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առաջին սահմանային սյան տեղադրումը: ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան երեկվա ճեպազրույցում ընդգծել է, որ Մոսկվան աջակցում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահմանի սահմանազատման բոլոր հարցերի կարգավորմանը բացառապես դիվանագիտական մեթոդներով:

«Մենք հիմք ենք համարում այն, որ պայմանավորվածությունները պետք է լինեն կայուն, հավասարակշռված եւ փոխընդունելի: Դրանք պետք է հիմք ծառայեն տարածաշրջանում կայուն խաղաղության հասնելու համար, եւ մենք հաստատում ենք մեր պատրաստակամությունը՝ շարունակելու խորհրդատվական օգնություն տրամադրել կողմերին սահմանազատման հարցում՝ Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների միջեւ եռակողմ պայմանավորվածությունների հիման վրա»,- ասել է Զախարովան:

2024 թվականի ապրիլի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության սահմանին գեոդեզիական չափումների հիման վրա, կոորդինատների ճշգրտման աշխատանքների շրջանակներում տեղադրվել է առաջին սահմանային սյունը: Երկու երկրների

փորձագիտական խմբերի աշխատանքները շարունակվում են:

ԸՍՏ ՍԻՄՈՆՅԱՆԻ՝ ԱՅԺՄ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆՔ

Տավուշի մարզի հատվածում սահմանազատման գործընթացի արդյունքում Հայաստանը եւ Ադրբեջանը կֆիքսեն պետական սահմանը: Այդ մասին լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ ասաց ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը՝ նշելով, որ սահմանազատված հատվածներում կտեղակայվեն սահմանապահները:

«Մեծ հույս ունեմ, որ նման ձեւով կշարունակենք մեր ամբողջ սահմանը սահմանազատել»,- ասաց ԱԺ նախագահը, ապա հավելեց, որ գործընթացը երկու երկրների միջեւ սահմանի ճշգրտումն իրականացնելու սկիզբն է:

«Անկեղծ, շատ ուրախ եմ, որ եկել, հասել ենք նրան, որ արդեն սյուներ ենք տնկում եւ ֆիքսում ենք սահմանը: Չէ՞ որ այդ սահմանը ֆիքսում ենք ոչ միայն հայկական կողմի համար, այլեւ ադրբեջանական կողմի համար: Սահման ենք ստանում: Միակողմանի զիջո՞ւմ է սահման ունենալը. միակողմանի զիջում է հավանական հարձակվող կողմից մեր հայկական սահմանը ճանաչե՞լը, դա զիջո՞ւմ է. որեւէ տարածք, որեւիցե թումբ հանձնվե՞լ է»,- ասաց Սիմոնյանը եւ նշեց, որ բազմիցս ասվել է, որ ՀՀ տարածքից որեւիցե մետր հանձնման առումով քննարկման ենթակա չէ:

Ըստ Սիմոնյանի՝ այժմ տարածքն ավելի պաշտպանված է, եւ որ գործընթացի արդյունքում՝ 10-12 կիլոմետր տարածքում Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջներ չունի:

Հիշեցնենք՝ 2024 թվականի ապրիլի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության սահմանին գեոդեզիական չափումների հիման վրա՝ կոորդինատների ճշգրտման աշխատանքների շրջանակներում տեղադրվել է առաջին սահմանային սյունը:

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ

ՓՈԽՄԱՐԶՊԵՏԻ ՈՐԴՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԸ ՊԱՅԹԵՑՐԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ երեկ չէ առաջին օրը Նորատուսում պայթյուն ու կրակոց լսվեց, ու ամենազարմանալին այն է, որ այս դեպքերը մեկը մյուսի հետ կապ ունեն:

Նորատուսի գերեզմանատանը պայթյուն էր եղել, եւ ArmLur.am-ին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ քաղաքացին պայթուցիկը բերել էր, որ տեղադրեր 7 տարի առաջ սպանված՝ Գեղարքունիքի փոխմարզպետի որդու գերեզմանին, ու այն տեղադրելուց հետո պայթյունը տեղի էր ունեցել ու նա մահացել էր:

Այս դեպքից ժամեր հետո Նորատուսի տներից մեկում լսվեց կրակոց. ինքնասպան էր եղել փոխմարզպետի որդու ապանության համար Մարտունի-Սեւան ճանապարհին սպանված Գուրգեն Հակոբյանի հայրը՝ Բ.Հակոբյանը:

Իրավապահների մոտ վարկած է քննվում, որ տարիներ առաջ այս երկու սպանությունների համար ընտանիքների թշնամությունը դեռ շարունակվում է ու, միգուցե, ինքնասպան եղած Հակոբյանն է կազմակերպել պայթեցնել Գեղարքունիքի փոխմարզպետի որդու գերեզմանը, քանի որ ապրիլի 24-ին փոխմարզպետի սպանված որդու ծննդյան օրն էր, ու հարազատները գերեզմանատուն էին գնալու. սակայն պլանը չի աշխատել, ու նա այս ամենից հետո սեփական տանը ինքնասպան է եղել: Ի դեպ, ըստ լուրերի՝ գերեզմանատանը պայթյունի սարքը տեղադրելու ժամանակ պայթյունից մահացած անձը՝ ինքնասպան եղած Բ. Հակոբյանի վարորդն է եղել:

Նշենք նաեւ, որ մեր հրապարակումից հետո Հայկ Հակոբյանի հարազատները հայտնել են, որ դեպքը իրենց գերեզմանից հեռավորության վրա է եղել:

Հիշեցնենք, որ Armlur.am-ը գրել էր, որ Գեղարքունիքի փոխմարզպետի որդու սպանության գործով կալանավորվածի հարազատը այսօր «Մակարով» տեսակի ատրճանակով ինքնասպան է եղել: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ կա վկա, որը մահացածի հարազատն է, եւ նրա ներկայությամբ է դեպքը եղել:

2017 թվականին՝ Գեղարքունիքի փոխմարզպետի որդու սպանությունից հետո, արյունահեղությունները շարունակվում են ու խլում մարդկանց կյանքեր:

Հիշեցնենք, որ 2017 թվականին Գեղարքունիքի փոխմարզպետի որդին՝ Հայկ Հակոբյանը, սպանվել էր:

Հունվարի 7-ին՝ ցերեկը՝ ժամը 12:30-ի սահմաններում, «Տոյոտա լենդ քրուիզեր պրադո» ավտոմեքենայից կրակոցներ էին արձակվել «Աուդի-Q7» մակնիշի ավտոմեքենայի ղեկին գտնվող Հայկ Հակոբյանի գլխի եւ պարանոցի ուղղությամբ, ինչի հետեւանքով ստացած վնասվածքներից՝ վերջինս հիվանդանոցի ճանապարհին մահացել էր:

Հակոբյանի վրա 7 կրակոց էր արձակվել:

Նշենք, որ մահացած Հայկ Հակոբյանը հանցագործ աշխարհում մեծ հեղինակություն համարվող Նորատուսցի եղբայրներ Ալիկ եւ Արա Բանդուրյանների քեռու տղան էր, իսկ հայրն այդ ժամանակ Գեղարքունիքի փոխմարզպետն էր:

Այս սպանությունը ունեցավ իր հետեւանքները. 2019 թվականին նոյեմբերի 2-ին՝ վաղ առավոտյան, Սեւան-Մարտունի ավտոճանապարհին հնչեցին կրակոցներ, ինչի հետեւանքով սպանվեց նույն մարզի բնակիչ 40-ամյա Գուրգեն Հակոբյանը: Բանն այն է, որ փոխմարզպետի որդու սպանության մեջ մեղադրվում է Մեխակ Հարությունյանը, որը սպանված Գուրգեն Հակոբյանի զարմիկն էր:

Մամուլում շրջանառվող տեղեկությունների համաձայն՝ այս դեպքը կապեցին քրեական հեղինակություն Նորատուսցի Ալիկի հետ, թե նա է կազմակերպել՝ ցանկանալով վրեժխնդիր լինել իր մորեղբոր որդու՝ Հայկ Հակոբյանի սպանության համար:

Եվ ահա, 5 տարի անց՝ փոխմարզպետի որդու սպանությունից հետո, վրեժխնդրության արդյունքում սպանված Գուրգեն Հակոբյանի հայրը այսօր ինքնասպան է լինում, ինչը խիստ կասկածների տեղիք է տալիս:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՊՕՐԻՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԱՐԵԼ ԵՆ ՆԱԵՎ ԱՅԼ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ

Ապրիլի 24-ին «Ազգային ժողովրդավարական բեւեռ»-ի երթի ժամանակ ոստիկանները ուժ են կիրառել հավաքի մասնակիցների եւ ԱԺԲ-ի անդամների նկատմամբ:

ArmLur.am-ի հետ զրույցում ԱԺԲ անդամ Արմինե Սախոյանն ասաց, որ այս պահի դրությամբ ազատ են արձակվել բոլոր ցուցարարները, ձերբակալված են մնացել միայն Ազգային ժողովրդավարական բեւեռի 7 անդամները:

«Փաստաբաններ կան, որ պետք է զբաղվեն այս հարցով, որ հասկանանք՝ ի՞նչ հիմքով է իրականացվել ձերբակալությունը:

Լաուրա Պապիկյանը Ծիծեռնակաբերդում Աննա Հակոբյանին չի վիրավորել, բայց ինչ-որ արտահայտություն էր արել, հենց դրա համար էլ Լաուրային ձերբակալել են. մեկ էլ Տիգրանն էր, որ ակտիվ է եղել, կադրերում երեւում է, մնացած մասնակիցների հետ կապված՝ հասկանալի չէ: Ստացվում է, որ մարդկանց ասած ճշմարտությունը առիթ է դարձել, որ ձերբակալեն իրենց:

Փաստաբաները կաշխատեն, որ հասկանանք՝ ի՞նչ հիմքով են եղել ձերբակալությունները: Տուգանային հրապարակում է գտնվում նաեւ մեր Pickup մեքենան»,- նշել է Արմինե Սախոյանը:

Երթի ժամանակ ձերբակալվել են նաեւ այլ երկրի քաղաքացիներ. նրանք դիմելու են տվյալ երկրի դեսպանատներ, քանի որ իրենց նկատմամբ բռնություն է կիրառվել:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՆԱԽԱՁԵՌՆՎԵԼ Է ՎԱՐՈՒՅԹ

Քննություն է իրականացվում՝ պարզելու ապրիլի 24-ին Երեւան-Երասխ միջպետական ավտոճանապարհին անվադողեր այրելու եւ այդ կերպ երթեւեկությունը խուլիգանական դրդումներով խաթարելու դեպքի հանգամանքները: Այդ մասին հայտնում են ՔԿ-ից:

Ինքնությունը չպարզված անձինք, խուլիգանություն կատարելու դիտավորությամբ, մասնավորապես՝ ավտոմեքենաների երթեւեկությունը խոչընդոտելու նպատակով, իրավական նորմերի նկատմամբ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, 2024 թվականի ապրիլի 24-ին՝ ժամը 16:25-ին, «Ford Tranzit» մակնիշի, «BMW X5» մակնիշի եւ «Mersedes Benz» մակնիշի ավտոմեքենաներով Երեւան-Երասխ միջպետական ավտոճանապարհի՝ Մասիս համայնքի վարչական տարածքի հատվածի երթեւեկելի գոտիներ են տեղափոխել եւ կուտակել բազմաթիվ անվադողեր: Այնուհետեւ, իրենց նպատակին հասնելու համար, մի կողմից դեպի Երասխ, իսկ մյուս կողմից՝ դեպի Երեւան ուղղություններով՝ տեղադրված անվադողերը հրկիզման եղանակով այրել են, ինչի հետեւանքով որոշակի ժամանակահատված ճանապարհի այդ հատվածում երթեւեկությունը խաթարվել է:

Նշված դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (խմբակային խուլիգանությունը) հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ոստիկանությանը տրվել է հանձնարարություն՝ նշված հանցավոր արարքն առերեւույթ կատարած անձանց ինքնությունը պարզելու, հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու նպատակով կատարել անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Քրեական վարույթի շրջանակներում ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կատարվածի հանգամանքները պարզելու եւ հանցագործություն կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով:

ՀՀ քննչական կոմիտեն նախազգուշացնում է ձեռնպահ մնալ հասարակական կարգը, հանրապետության կենսագործունեությունն ապահովող միջպետական եւ այլ նշանակության ճանապարհների երթեւեկությունը նման հանցավոր եղանակներով խոչընդոտելուն ուղղված գործողություններից: Նման բոլոր դեպքերը դարձվելու են մանրամասն քննության առարկա եւ հանցագործություն կատարած անձինք ենթարկվելու են քրեական պատասխանատվության:

ԱՄՆ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ԱՐՏԱՀԱՆՁՆԵԼ ԵՆ

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության եւ ՀՀ գլխավոր դատախազության ու ներքին գործերի նախարարության համագործակցության արդյունքում Միացյալ Նահանգներին է հանձնվել հետախուզման մեջ գտնվող ԱՄՆ քաղաքացի: «Այս հաջողված համատեղ գործողությունն ի ցույց է դնում ԱՄՆ եւ ՀՀ իրավապահների արդյունավետ գործընկերությունը»,- ասված է ԱՄՆ դեսպանության տարածած հաղորդագրության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 23-ից 25-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 203 դեպք, որից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՆՅԱՐԴԱՅՆԱՑՐԵԼ Է ՀԱՐՑԸ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ 2019 թվականի սեպտեմբերից Իջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար, 2021 թվականի ապրիլի 8-ից Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին հարցում ենք արել. «Դուք ո՞ր թվականին եք դարձել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ, ո՞ր թվականին՝ այդ կուսակցության վերահսկող հանձնաժողովի նախագահ»: Մարզպետը տվել է ապշեցնող պատասխան. «Հարցի վերաբերյալ Ձեզ պատասխանվել է»:

Ե՞րբ է պատասխանվել. իրականում «չի պատասխանվել», այլապես մենք այդ հարցի պատասխանը մամուլում կհրապարակեինք: Բացի դրանից, մեր լրագրողի կողմից անիմաստ կլիներ մարզպետին տալ այն հարցը, որին նա պատասխանել է. կարծում ենք, որ ՔՊ-ի հանդեպ Հայաստանի, մասնավորապես՝ Տավուշի մարզի բնակիչների կարծիքը իմանալով՝ մարզպետ Ղալումյանը խուսափել է հարցին պատասխանելուց:

Տավուշի մարզպետ նշանակվելուց հետո նա երկար ժամանակ իր կենսագրության մեջ չէր նշում կուսակցական պատկանելիության մասին. մարզպետին իր կուսակցական պատկանելիության վերաբերյալ մեր հարցումներից հետո մարզպետարանի ինտերնետային կայքում տեղադրված կենսագրության մեջ նա հավելեց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ լինելը:

ԲԱՂԱՆԻՍ-ՈՍԿԵՊԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՓԱԿ Է

Ապրիլի 25-ի առավոտից Բաղանիս-Ոսկեպար հիմնական ավտոճանապարհը երկկողմանի փակել են, որպեսզի սահմանազատման գործընթացի սահմաններում աշխատանքներ իրականացնեն: Միջպետական ավտոճանապարհի այդ հատվածում երթեւեկը կատարվում է «Հարսնաքարով» ձգվող շրջանցիկ ճանապարհով: Բաղանիսի բնակիչները հայտնեցին, որ սահմանազատման անվան տակ տարածքներ հանձնելուց հետո Ադրբեջանի, Բաղանիս-Այրում նախկին գյուղի սահմանը ձգվելու է Բաղանիսի այժմյան աղբավայրի մեջտեղով: Այստեղ արդեն սահմանային սյուներ են տեղադրվել:

Բաղանիս գյուղում հավաքված կենցաղային աղբը հեռացվում է ամեն կիրակի օր:

Անցած կիրակի՝ ապրիլի 21-ին, Բաղանիսի կենցաղային աղբը տեղափոխվել է նշված աղբավայր, սակայն հաջորդ կիրակի, ամենայն հավանականությամբ, դա հնարավոր չի լինելու անել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

«2023 թվականին նախորդ տարվա համեմատ աճել է ՄԻՊ-ին ուղղված դիմումների թիվը, շեշտակի աճել է նաեւ դրական լուծում ստացած գործերի թիվը. 2022 թվականին ունեցել ենք 1282 դրական լուծում ստացած գործ, իսկ 2023 թվականին՝ 1922»: Այս մասին ասել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը:

Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապրիլի 25-ի նիստում ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը ներկայացրել է «2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը եւ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2023 թվականի գործունեության վերաբերյալ» տարեկան զեկույցը:

Ամփոփ ներկայացնելով Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող հիմնական խնդիրները՝ Անահիտ Մանասյանը նշել է, որ 512 այց է իրականացվել տարբեր հաստատություններ ու վայրեր:

Անդրադառնալով միջազգային համագործակցության հարթակում արձանագրված ձեռքբերումներին՝ զեկուցողը նշել է, որ Հայաստանի ՄԻՊ-ն առաջին անգամ ընդգրկվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների եվրոպական ցանցի կառավարման մարմնում:

Անահիտ Մանասյանը խոսել է հասարակության շրջանում առկա անհանդուրժողականության եւ ատելության մթնոլորտի մասին: Նա նշել է, որ արձանագրվել են խնդիրները եւ նախանշվել են դրանց լուծման ուղիները: Մարդու իրավունքների պաշտպանը չափազանց կարեւորել է հանրային եւ քաղաքական գործիչների, զանգվածային լրատվամիջոցների դերակատարությունը՝ ատելության խոսքի եւ անհանդուրժողականության հակազդմանը:

Նշվել է, որ կառույցը հատուկ ուշադրություն է դարձրել խոսքի ազատության, հավաքների ազատության իրավունքի իրացման, կալանքի, անմեղության կանխավարկածի, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերին. արձանագրվել են բազմաթիվ խնդիրներ:

Անահիտ Մանասյանը խոսել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բնագավառում արձանագրված համակարգային խնդիրների մասին:

Նա մտահոգիչ է համարել երեխաների նկատմամբ բռնության դեպքերի ծավալը եւ դրանց վերաբերելի հարցերը, որոնք, ըստ զեկուցողի, պետք է ստանան պատշաճ հասցեավորում: Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքով ՀՀ-ն պետք է ունենա երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման հստակ հայեցակարգ, ռազմավարություն:

Նշվել է, որ զեկույցում հատուկ անդրադարձ կա փաստաբանների գործունեության երաշխավորմանը. մասնավորապես նկարագրվել են փաստաբանների նկատմամբ բռնության դեպքերը եւ ընդգծվել է դրանց անթույլատրելիությունը:

Ըստ Անահիտ Մանասյանի՝ զեկույցում բավականին ծավալուն ներկայացված են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների իրավունքներին վերաբերող հարցերը. կառույցի կողմից ցուցաբերվել է թե՛ աջակցություն եւ թե՛ արձանագրվել են խնդիրները:

Անահիտ Մանասյանը պատասխանել է պատգամավորների հարցերին, տրվել պարզաբանումներ: Մասնավորապես՝ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռուստամ Բաքոյանը հետաքրքրվել է՝ արդյոք պետական մարմինների կողմից ճնշումներ լինում են Մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ, եւ արդյոք այդ մասին նշվել է հաղորդման մեջ:

Ի պատասխան՝ Անահիտ Մանասյանը տեղեկացրել է, որ պետական մարմինների կողմից ճնշումներ չեն եղել: «Սովորաբար Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների նկատմամբ ամենամեծ վտանգը նկատվում է հենց պետական մարմիններից, հատկապես՝ գործադիր իշխանության մարմիններից: Հատուկ արձանագրեմ՝ եթե խոսքը պետական իշխանության մարմինների մասին է, ապա նշեմ, որ այս տարվա ընթացքում որեւէ դեպքով չեմ նկատել իմ անկախության նկատմամբ ոտնձգություն կամ իմ նկատմամբ ճնշում, քանի որ կարողացել եմ շատ ազատ խոսել բոլոր խնդիրների վերաբերյալ, կամ որեւէ խնդրի վերաբերյալ խոսելուց հետո չեմ ունեցել դրա հետ կապված այնպիսի արձագանք, որը կարող է իմ անկախության նկատմամբ ոտնձգության վերաբերյալ վկայել»,- մանրամասնել է պաշտպանը՝ հույս հայտնելով, որ այս իրավիճակը կշարունակվի:

Նիստի ավարտին Ռուստամ Բաքոյանը շնորհակալություն է հայտնել Անահիտ Մանասյանին կատարած աշխատանքների համար՝ նշելով, որ միջազգային բազմաթիվ կառույցների ներկայացուցիչներ, անցկացնելով մշտադիտարկում, դրական են գնահատել Հայաստանի Հանրապետության ՄԻՊ-ի գործունեությունը:

Զեկույցն ընդունվել է ի գիտություն:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ

ՉԴԱԴԱՐՈՂ ԴԱՍԱԴՈՒԼ՝ ԲԱՂԱՆԻՍՈՒՄ

«Սահմանապահ Բաղանիսի դպրոցի աշակերտները դասադուլ են անում՝ հանուն հայրենիքի». - այս մասին հայտնում են «Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնությունից:

«Ստի եւ կեղծիքի դեմ պայքարը շարունակվում է՝ հանուն ճշմարտության եւ արդարության»,- գրված է նախաձեռնության ֆեյսբուքյան էջում:

Հիշեցնենք, որ Տավուշի սահմանամերձ գյուղերի բնակիչներն ապրիլի 19-ից բողոքի ակցիաներ են անում Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհին:

Նրանք դեմ են սահմանազատման այն տարբերակին, որը համաձայնեցրել են Երեւանն ու Բաքուն:

● *Անցած 2 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 1 մարդ զոհվել է, 24-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ ՊԵԿ-ը հրապարակել է այս տարվա առաջին եռամսյակի 1000 խոշոր հարկատուների ցանկը:

Ըստ այդմ, խոշոր հարկատուների ցուցակը գլխավորում է «Մոբայլ սենթր արթ» ՍՊԸ-ն, որը վճարել է 19 մլրդ 907 մլն 415 հազար դրամի հարկ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այս ընկերությունը 6-րդ հորիզոնականն էր զբաղեցնում՝ վճարելով 5 մլրդ 339 մլն 559 հազար դրամ:

2-րդ տեղում «Գազպրոմ Արմենիա» ընկերությունն է, որ վճարել է 18 մլրդ 162 մլն 346 հազար դրամ. 2023-ին «Գազպրոմ Արմենիա»-ն գլխավորում էր խոշոր հարկատուների ցանկը:

3-րդ տեղում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է՝ 15 մլրդ 626 մլն 783 հազար դրամ հարկով: Այս ընկերությունը նախորդ տարի երկրորդ տեղում էր:

4-րդ տեղում «Գրանդ տոբակո» ընկերությունն է, որ վճարել է 13 մլրդ 215 մլն 530 դրամ:

5-րդ տեղում «Փրիթի ուեյ» ՍՊԸ-ն՝ «Վեստա» խանութների ցանցը, որ այս տարի մուծել է 8 մլրդ 810 մլն 850 հազար դրամ:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԵԼ Է

Հայաստանի արտաքին առեւտրաշրջանառությունը տարեսկզբից կայուն աճել է: Այդ մասին փաստող ցուցանիշներ է ներկայացրել ՀՀ վիճակագրական կոմիտեն:

Երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների մասին հաշվետվությունից հետեւում է, որ այս տարվա մարտին արտաքին առեւտրաշրջանառությունը կազմել է 3 մլրդ 568.2 մլն դոլար: Մեկամյա վաղեմության ցուցանիշը գերազանցվել է 2.1 անգամ: Այս տարվա փետրվարի համեմատ աճը կազմել է 7.3 տոկոս: Ընթացիկ տարվա առաջին քառամսյակում այն կազմել է 9 մլրդ 169.7 մլն դոլար, ինչը նույնպես 2.1 անգամ գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Ծավալը արտահանման մարտին կազմել է 1 մլրդ 845.4 մլն դոլար՝ 3 անգամ գերազանցելով 2023 թվականի նույն ամսվա ցուցանիշը: Այս տարվա փետրվարի համեմատ աճը կազմել է 13.1 տոկոս: Հունվար-մարտ ամիսներին Հայաստանից արտահանվել է 4 մլրդ 422.8 մլն դոլարի ապրանք, ինչը 2.7 անգամ գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Այս տարվա մարտին երկիր է ներմուծվել 1 մլրդ 722.8 մլն դոլարի ապրանք: Ընթացիկ տարվա հունվար-մարտ ամիսներին Հայաստան ներկրված ապրանքների ծավալը կազմել է 4 մլրդ 746.9 մլն դոլար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը գերազանցվել է 75.8 տոկոսով:

2024-ի մարտին դրամի փոխարժեքը ներկայացված է՝ ԱՄՆ 1 դոլարի դիմաց 400.42 դրամի հաշվարկով: Հունվար-մարտ ամիսներին դոլարի արժեքը կազմել է 403.22 դրամ:

ԱՎՏՈՄԱՏ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՈՑՎՃԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

Սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարներն այսուհետ կվերադարձվեն ավտոմատ համակարգի միջոցով:

Ի՞նչ պետք է իմանալ սոցիալական վճարի վերադարձի մասին

Մի քանի աղբյուրից հաշվարկված եւ փոխանցված սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները ֆիզիկական անձանց վերադարձվում են ինքնաշխատ եղանակով եւ հարկային մարմին դիմելու անհրաժեշտություն չկա: Ավտոմատ համակարգի միջոցով Կենտրոնական բանկը պետական եկամուտների կոմիտեին տրամադրում է ֆիզիկական անձին պատկանող մեկ վավեր հաշվեհամար (անկախ արժույթից), որին էլ փոխանցվում է գումարը:

Ովքե՞ր կարող են օգտվել սոցիալական վճարների վերադարձից

Մի քանի աղբյուրից հաշվարկված եւ փոխանցված սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարների վերադարձից կարող են օգտվել այն ֆիզիկական անձինք, որոնք մի քանի գործատուների մոտ աշխատում են որպես վարձու աշխատող, կամ, միաժամանակ, հանդիսանում են վարձու աշխատող եւ անհատ ձեռնարկատեր կամ նոտար, որի արդյունքում նրանց համար հաշվարկված եւ փոխանցված սոցիալական վճարի ընդհանուր գումարը գերազանցում է սահմանված առավելագույն չափը:

Ինչպե՞ս է հաշվարկվում սոցիալական վճարը

Եթե ֆիզիկական անձի ամսական եկամուտը չի գերազանցում 500 հազար դրամը, ապա սոցիալական վճարը հաշվարկվում է եկամտի 5 տոկոսի չափով, իսկ գերազանցելու դեպքում՝ եկամտի 10 տոկոսի եւ 25 հազար դրամի տարբերության չափով, բայց ոչ ավելի՝ 87 հազար 500 դրամից:

Եթե ֆիզիկական անձի տարեկան եկամուտը չի գերազանցում 6 մլն դրամը, ապա սոցիալական վճարը հաշվարկվում է եկամտի 5 տոկոսի չափով, իսկ 6 մլն դրամը գերազանցելու դեպքում՝ եկամտի 10 տոկոսի եւ 300 հազար դրամի տարբերության չափով, բայց ոչ ավելի՝ 1 մլն 50 հազար դրամից:

Ո՞ր դեպքերում է վերադարձվում սոցիալական վճարը

Սոցիալական վճարների գումարները վերադարձվում են, եթե մի քանի աղբյուրից ստացված ընդհանուր եկամուտը գերազանցում է ամսական 1 մլն 125 հազար դրամը (նվազագույն ամսական աշխատավարձի՝ 75 հազար դրամի 15-ապատիկը) եւ (կամ) տարեկան 13 մլն 500 հազար դրամը (նվազագույն ամսական աշխատավարձի 180-ապատիկը): Սոցիալական վճարների հաշվարկն իրականացվում է աշխատավարձից, քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների եւ մատուցված ծառայությունների դիմաց ստացված եկամուտներից եւ ձեռնարկատիրական եկամտից:

Ի գիտություն

Այն դեպքում, երբ շահառուն ցանկանում է՝ գումարները փոխանցվեն իր նախընտրած վավեր հաշվեհամարին, ապա կարող է այցելել ՊԵԿ սպասարկման ցանկացած սրահ կամ հաշվեհամարը ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային հարցումների միասնական www.e-request.am հարթակի միջոցով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԸ ՉԵՆ ՍՐՍԿՎԵԼ

Դեռ մարտ ամսից Երեւան քաղաքում տեղի էր ունենում ծառերի սպանդ: Երեւանյան հին եւ հաստաբուն ծառերը փոխարինվել են թեղիներով, սակուրաներով, որոնց սաղարթը չի համեմատվի երեւանյան հնաբնակ եւ սաղարթախիտ ծառերի հետ:

Քաղաքացիների շրջանում դժգոհություն են առաջացել՝ նոր եւ երիտասարդ ծառերի վերաբերյալ, քանի որ ծառերը ոչ միայն չեն պաշտպանում կիզիչ արեւից, այլեւ ծառերի վրայից միջատներ, մոծակներ եւ մլակներ են լցվում ներս:

Չնայած նրան, որ արդեն ապրիլ ամսվա վերջն է, ծառերի թունաքիմիկատները չեն փչվել:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանի հետ՝ հասկանալու համար, թե ե՞րբ են սկսվելու ծառերը փչելու աշխատանքները: Մեզ հետ զրույցում Արմեն Բեգոյանն ասաց, որ այսօրվանից մեկնարկելու են ծառերի սրսկման աշխատանքները եւ շարունակվելու են մինչեւ հոկտեմբեր ամիս:

«Աշխատանքները մեկնարկում են այսօր, շարունակվելու են գրեթե ամենօրյա գրաֆիկով, սրսկվելու են մի քանի անգամ, ամեն վարչական շրջանում մինչեւ հոկտեմբեր ամիս»:

Հետաքրքրվեցինք նաեւ՝ արդյո՞ք այդ սրսկումները ինչ-որ օգուտ կարող են տալ, ինչին ի պատասխան, Բեգոյանն ասաց. «Թեղիների դեպքում ունենք մի փոքր կասկած, օգտավետություն ոչ շատ քիչ կտա: Մնացած բոլոր ծառերի դեպքում, այո, օգուտ կլինի: Բավականին լավ թունաքիմիկատներ են օգտագործվում»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԿԵՐԿԱՐԱՁԳՎԻ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունից տեղեկացնում են, որ նախարար Գնել Սանոսյանն ընդունել է Հայաստանում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ժամանակ քննարկվել են Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների վերաբերյալ հարցեր:

Քննարկվել են նաեւ ենթակառուցվածքների զարգացման, միջտարածաշրջանային համագործակցության, ինչպես նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

2.72 ՄԼՆ ԵՎՐՈՅԻ ՆՈՐ ՏՐԱՆՇ

Կառավարությունն իր երեկվա՝ ապրիլի 25-ի նիստում հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ 2016 թ. մայիսի 11-ին ստորագրված՝ «Գյումրու քաղաքային ճանապարհներ» վարկային համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2 համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծին:

Ըստ հիմնավորման՝ ծրագրի իրականացման նպատակով ՎԶԵԲ-ից ներգրավվել են 14.6 մլն եվրո ծավալով վարկային եւ 5.3 մլն եվրո ծավալով դրամաշնորհային միջոցներ: Մեկ այլ դրամաշնորհ՝ 2 մլն եվրո ծավալով, ներգրավվել է Արեւելյան Եվրոպայի էներգախնայողության ու շրջակա միջավայրի գործընկերության («E5P») տարածաշրջանային հիմնադրամից: Համաձայնագրով կնախատեսվի 2.72 մլն եվրո արժողությամբ նոր՝ Դ տրանշ՝ ուղղված Գյումրու Անի եւ Ավստրիական թաղամասերում իրականացվելիք աշխատանքների համաֆինանսավորմանը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱՎԵՊԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՆՎԻՐՅԱԼԸ

136 տարի առաջ այս օրը մահացել է մեծանուն գրող Ռաֆֆին, որի ստեղծագործություններն առանձնանում են հուզական եւ գիտակցական աշխարհների բախմամբ:

Հայ գրող, հրապարակախոս եւ հասարակական գործիչ Հակոբ Մելիք-Հակոբյանը ծնվել էր 1835 թվականին Փայաջուկում՝ Իրանի Սալմաստ գավառում գտնվող հին հայկական գյուղում՝ հարուստ ազնվականի ընտանիքում:

13 զավակների հայրը՝ Մելիք Միրզան, հսկայական կալվածքներ ուներ, իսկ մելիքությունը նրանց ժառանգական իրավունքն էր, ու հենց նրանց էր վերապահված գյուղերի կառավարումը:

Թիֆլիսում ուսանելու տարիներին ապագա գրողը սկսում է տարվել Շիլլերի եւ Հյուգոյի ստեղծագործություններով: Ուսումը չավարտած՝ վերադառնում է Փայաջուկ՝ կառավարելու ընտանեկան ժառանգությունը, սակայան ազգային գաղափարներով տարված երիտասարդը երկար չի կարողանում այդպես ապրել, եւ ճանապարհորդելով Պարսկաստանի եւ Թուրքիայի հայկական գավառներում՝ գրառում է ժողովրդի նիստուկացի, բնաշխարհագրական տեղայնության, պատմական հիշատակների վերաբերյալ իր հարուստ տպավորությունները:

1879 թվականին մշտական բնակություն է հաստատում Թիֆլիսում եւ զբաղվում միայն գրական աշխատանքով: Աշխատակցում է Աբգար Հովհաննիսյանի «Արձագանք» թերթին եւ «Մշակ» լրագիրին, որը սկսում է հրատարակվել 1872 թվականից՝ Գրիգոր Արծրունու խմբագրությամբ:

Գրողը մահանում է 1988 թվականին եւ թաղվում Թիֆլիսում՝ Խոջիվանքի հայկական գերեզմանոցում: Նրա մահվանից հետո գրողին նվիրված մեկ այլ մեծանուն գրչի՝ ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի խոսքերն են. «Ճապոնացիների մեջ մի գեղեցիկ սովորություն կա, որ դիմում են իրենց մեռած գործիչների հոգիներին, ինչպես կենդանի մարդկանց: Հետեւելով էս գեղեցիկ սովորությանը՝ էսօր Հայոց Գրողների Ընկերության անունից ես դիմում եմ Ռաֆֆու հոգուն:

Անմահ հոգի՛, որ հայի բազմադարյան տառապանքով ու նրա լավ ապագայի կարոտով լցված՝ քո տաղանդի կախարդական ուժով դուրս կանչեցիր անցյալի մութից ու ապագայի անհայտությունից հրապուրիչ պատկերներ ու հերոսական դեմքեր ու նրանցով վառեցիր, ոգեւորեցիր վիատներին, որ տկարներիս համարձակություն ներշնչեցիր ու ղրկեցիր հզորների դեմ նահատակության՝ արյունով լվանալու եւ սրբելու ստրկության արտասուքը, որ անհանգստություն տվիր հայ ժողովրդի հոգուն եւ ուղղեցիր նրան դեպի ազատագրության ճանապարհը, էսօր եկել ենք քո գերեզմանի վրա դնելու թարմ ծաղիկների հետ եւ մեր ցավերը, որ միշտ մնում են թարմ, եւ մեր զգացմունքները, որ համակված են քո շնչով ու հիշատակով: Եկել ենք քո գերեզմանի վրա օրհնելու եւ փառաբանելու քո տված անհանգստությունը, էն ճանապարհը, որ ցույց տվիր, եւ էն նահատակների շարքերը, որ գնացին քո ցույց տված ճանապարհով:

Անհանգիստ հոգի՛, անշուշտ այժմ դու սավառնում ես էն դժբախտ աշխարհի երկնքում, որ քո մահից 25 տարի հետո՝ դարձյալ մի անգամ ավելի մեծ թափով ու սարսափով բարձրացել են հույզերն ու հույսերը, եւ թերեւս հեռու չի օրը, երբ մենք կկարողանանք կրկին գալ քո շիրմի վրա ու կանչել.- արդեն կատարված է քո իղձը, ո՛վ անհանգիստ հոգի, ընդմիշտ վերացած ու վերջացած են էնքան արյուններ, էնքան կոտորած, եւ «ամեն կողմից պանդուխտ հայազգիք դիմում են իրենց սիրուն հայրենիք...»: Արդեն կատարված է հայ ժողովրդի ազատագրության մեծ գործը, հանված է նա հին դժոխքից, ապահով է անվերջ կոտորածներից ու հանգիստ, անլուր հալածանքներից, դու էլ հանգստացիր քո հավիտենական կայանում, ո՛վ անհանգիստ հոգի»:

Գրող Ռաֆֆին առանձնանում է իր կյանքում եւ ստեղծագործություններում առկա պայքարով, պայքար՝ ազգայինի համար, պայքար կանանց կրթության իրավունքի համար, պայքար ազատության համար: Ռաֆֆու ստեղծագործություններում հաճախ առկա է բախում գիտակցական եւ հուզական աշխարհների միջեւ: Որպես ընթերցող՝ մենք հաճախ հերոսների արարքները հուզականորեն քննադատում, իսկ գիտակցական մակարդակում գնահատում ենք, համամիտ լինում նրանց «որոշումների» հետ: Այդպես է հատկապես «Սամվել» վեպի վերջաբանի դեպքում...

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԴԻՄԱՔԱՆԴԱԿՆԵՐԻ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Այսօր՝ ապրիլի 26-ին՝ ժամը 19:00-ին, Two Arcs-ում տեղի կունենա քանդակագործ Մկրտիչ Մազմանյանի՝ Շառլ Ազնավուրին նվիրված դիմաքանդակների ինտերակտիվ ցուցահանդեսը:

Բացման օրը արվեստասերներին կներկայացվի նաեւ Մազմանյանի ստեղծագործական ուղուն նվիրված պատկերագիրքը:

Ցուցահանդեսն իրականացվում է Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակում:

Միջոցառման հիմքում ընկած է Շառլ Ազնավուրին հարգանքի տուրք մատուցելու, մարդկանց տված իր հսկայական երաժշտական եւ հոգեւոր ժառանգությունը գնահատելու գաղափարը:

ԻԼՅԱ ՌԱՄԼԱՎԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում համերգով հանդես կգա վիրտուոզ դաշնակահար Իլյա Ռամլավը: Դաշնամուրային մենահամերգը տեղի կունենա ապրիլ 30-ին՝ ժամը 19:00-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում:

Ռամլավը հանրության ուշադրության առանցքում է հայտնվել 2018 թվականին կայացած հեղինակավոր համառուսական երաժշտական մրցույթում հաղթելուց հետո: Այդ հաղթանակից հետո սկսվել է նրա երաժշտական ճանապարհորդությունը՝ ընդգրկելով ելույթներ Նյու Յորքում, Սան Պաուլոյում, Փարիզում եւ Բուենոս Այրեսում:

Իլյա Ռամլավը հաճախ հանդես է գալիս որպես մենակատար աշխարհի տարբեր երկրներում, ելույթներ է ունենում հյուրախաղերով: Արգենտինայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում կայացած միջազգային մրցույթների դափնեկիր է: Ելույթ է ունեցել Շվեյցարիայի, Ռուսաստանի, Արգենտինայի, Ուրուգվայի եւ ԱՄՆ մի շարք հեղինակավոր նվագախմբերի հետ:

Նրա կատարումների տեսագրություններն ու ձայնագրությունները ներկայացվել են մի շարք հեռուստաալիքներով եւ ռադիոներով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՆԻ 7 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունում մեկնարկում են կիսաեզրափակիչները:

Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում ընթացող Եվրոպայի առաջնությունում Հայաստանն ունի 7 ներկայացուցիչ:

50 կգ քաշային Անուշ Գրիգորյանի մրցակիցը իռլանդացի Սվինի Շանոն է:

70 կգ քաշում Անի Հովսեփյանը կմենամարտի ռուս Դարիմա Սանդակովայի հետ:

Տղամարդկանց պայքարում 48 կգ քաշային Բարեղամ Հարությունյանը կմրցի Սերբիայից Ռադե Յոկսիմովիչի հետ:

57 կգ Արթուր Բազեյանի հակառակորդը ռուս Էդուարդ Սավվինն է:

60 կգ Արթուր Սահակյանն էլ ուժերը կչափի բուլղար Ռադոսլավ Ռոսենովի հետ:

67 կգ քաշում Արարատ Հարությունյանը եզրափակիչ դուրս գալու համար կմրցի ռուս Տարխան Իգիդովի հետ:

Իսկ Նարեկ Մանասյանի մրցակիցը 92 կգ քաշում Ադրբեջանը ներկայացնող Լորեն Ալֆոնսոն է:

ՇԱԽՄԱՏ

Հունաստանի Հռոդոս կղզում ընթացող շախմատի կանանց Եվրոպայի 24-րդ առաջնության 5-րդ տուրում Լիլիթ Մկրտչյանը հաղթել է սերբուհի Տիյանա Մանդուրային, իսկ Մարիամ Մկրտչյանը՝ ֆրանսուհի Բեատրիս Բելյուրին:

Կանանց Հայաստանի հավաքականի առաջատար Էլինա Դանիելյանը ոչ-ոքի է խաղացել իսրայելցի Նոգա Օրիանի հետ, իսկ Սուսաննա Գաբոյանը պարտվել է Պոլին Գիշարին (Ֆրանսիա):

Լիլիթ Մկրտչյանը 3,5 միավորով բաժանում է 21-41-րդ, Մարիամ Մկրտչյանը 3 միավորով՝ 42-73-րդ, Էլինա Դանիելյանն ու Սուսաննա Գաբոյանը 2,5 միավորով՝ 74-111-րդ տեղերը:

Եվրոպայի առաջնությունն անցկացվում է շվեյցարական մրցակարգով՝ 10 խաղափուլով: Ընդհանուր մրցանակային հիմնադրամը 60.000 եվրո է: ԵԱ-ն նաեւ ընտրական փուլ է կանանց աշխարհի գավաթի խաղարկության համար: Մասնակցության իրավունք կստանա առնվազն 10 շախմատիստուհի:

ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ ԵՆ

Իտալիայի Ռիմինի քաղաքում անցկացվող սպորտային մարմնամարզության Եվրոպայի առաջնությունում աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Արթուր Դավթյանը դուրս եկավ հենացատկի եզրափակիչ: Արթուր Դավթյանը վաստակեց 14.416 միավոր եւ գրավեց 5-րդ տեղը: Առաջին ցատկի գնահատականը 15.100 էր: Երկրորդ ցատկի ժամանակ ցատկի բարդությունը փոխվեց: Մրցավարները գնահատեցին 13.733 միավոր: Մինչ այս պահը Տոկիոյի Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիրը թիմակիցների հետ սպասում էր վերջնական արդյունքներին, քանի որ մտավախություն ուներ, թե եզրափակիչ դուրս չէր գա: Եվրոպայի առաջնության եզրափակիչ դուրս եկան նաեւ Գագիկ Խաչիկյանը եւ Արթուր Ավետիսյանը: Գագիկ Խաչիկյանը նժույգ թափեր վարժության որակավորման փուլում գրավեց 6-րդ տեղը՝ 14.600 միավոր, Արթուր Ավետիսյանը օղակների վարժության որակավորման 7-րդ տեղում է՝ 14.633 միավոր:

● *Ապրիլի 26-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Մեծ լռություն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ո՞ր դեպքում է ՖՆ գանձապետական հաշվին փոխանցում կատարվում եւ ի՞նչ փաստաթղթեր քաղաքացին կարող է ներկայացնել խնդիրը լուծելու համար:

Սարգիս Ավանեսյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարկերի միասնական հաշվին վճարված, սակայն ՀՎՀՀ-ն նշված չլինելու կամ սխալ դաշտում նշված լինելու պատճառով հաշվին չմուտքագրված գումարները ճիշտ ՀՎՀՀ-ով հաշվին մուտքագրելու նպատակով վճարողը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնում է դիմում՝ նշելով վճարման տվյալները /վճարված գումարը, վճարման ամսաթիվը/ եւ ճիշտ ՀՎՀՀ-ն, որով ենթակա է գումարը մուտքագրման հարկերի միասնական հաշվին, դիմումին կից ներկայացվում է վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օրինակ՝ կից ներկայացնելով օօ/աա/տտ թ.-ի N վճարման անդորրագրի պատճենը՝ հայտնում եմ, որ կատարել եմ օօ/աա/տտ թ.-ին x գումար վճարում 900008000490 հարկերի միասնական հաշվին: Հարկատուի ՀՎՀՀ-ն նշված չլինելու պատճառով /կամ սխալ դաշտում նշված լինելու պատճառով/ գումարը հաշվին չի մուտքագրվել: Խնդրում եմ x գումարը մուտքագրել 900008000490 հարկերի միասնական հաշվին՝ XXXXXXXX ՀՎՀՀ-ով:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է իրականացվում իրավունքների փոխանցումը եւ օգտագործման թույլտվությունը :

Անահիտ Համբարձումյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները հեղինակի կողմից կարող են ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցվել (զիջվել) երրորդ անձանց կամ նրանց տրամադրվել օգտագործման թույլտվություն (լիցենզիա)՝ հեղինակի եւ նրանց միջեւ կնքված համապատասխանաբար՝ զիջման կամ լիցենզային (այսուհետ նաեւ՝ հեղինակային) պայմանագրի հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Հեղինակային պայմանագիրը կնքվում է գրավոր ձեւով, որն էլ հանդիսանում է կողմերի երաշխիքը, քանի որ տվյալ պայմանագրով կարգավորվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, որոնք վերաբերում են ստեղծագործության օգտագործմանը:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պայմանագրի կողմը, որի իրավունքներն ու օրինական շահերը խախտվել են, կարող է դատարանի միջոցով պահանջել իր իրավունքների հարկադիր իրականացում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

Հայրենասիրությունը տարիք չի ճանաչում: Անգամ այնպիսի փոքրիկ դետալով, ինչպիսին Արցախի դրոշն է մանկասայլակի վրա, փոքրիկը մասնակցում է Ջահերով երթին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+6 +9	+23 +27
Կոտայքի լեռներ	+6 +9	+23 +25
Կոտայքի նախալեռներ	+11 +13	+24 +28
Գեղարքունիք	+4 +8	+21 +24
Լոռի	+6 +10	+24 +27
Տավուշ	+10 +15	+26 +29
Արագածոտնի լեռներ	+6 +8	+22 +24
Արագածոտնի նախալեռներ	+10 +14	+24 +29
Արարատ	+13 +15	+30 +33
Արմավիր	+11 +13	+30 +32
Վայոց ձորի լեռներ	+5 +8	+22 +24
Վայոց ձորի նախալեռներ	+12 +14	+30 +32
Սյունիքի հովիտներ	+13 +16	+29 +32
Սյունիքի նախալեռներ	+7 +11	+23 +26
ԼՂՀ	+7 +10	+22 +25
Երեւան	+11 +13	+26 +29

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*